ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/59

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.05.2018թ. թիվ 03/26-3/8820-18 գրությամբ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 04.05.2018թ. թիվ 01/29-569 գրության հիման վրա, 16.05.2018թ. թիվ 03/26-3/8820-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), գնահատող հանձնաժողովի որոշմամբ հաղթող է ճանաչվել 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով: Սակայն, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 02.05.2018թ. տրամադրված տեղեկատվության՝ Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա (25.04.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով եղել է 21 037 (քսանմեկ հազար երեսունյոթ) ՀՀ դրամի չափով պարտավորություն:

Տեղեկանալով վերը նշված պարտավորության մասին՝ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով 04.05.2018թ. գանգատ է ուղարկվել, համաձայն որի սույն թվականի մարտի 16-ին Ընկերությունը միասնական հաշվին կատարել է առաջին եռամսյակի շահութահարկի կանխավճարի վճարում 1 915 000 ՀՀ դրամ գումարի չափով, որի վճարման վերջնաժամկետը մարտի 20-ն էր: Մարտի 19-ին Ընկերության կողմից ներկայացվել է ԵՏՄ անդամ պետությունից մարտ ամսին ներմուծված ապրանքների ներմուծման հարկային հայտարարագիր, որով հաշվարկվել է ԱԱՀ պարտավորություն 1 614 737 ՀՀ դրամ գումարի չափով, որի վճարման վերջնաժամկետը ապրիլի 20-ն էր:

Քանի որ ՀՀ հարկային օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ հարկային հաշվարկով առաջացած հարկային պարտավորությունները և դեբետային գումարները հարկային մարմնում հաշվառվում են հարկային հաշվարկի ներկայացման ամսաթվով, իսկ Օրենսգրքով սահմանված կանխավճարները հաշվառվում են դրանց վճարման վերջնաժամկետներով, արդյունքում 16.03.2018թ. կատարված վճարման հաշվին մարվել է ԵՏՄ ներմուծման ԱԱՀ-ն, որի վճարմանը դեռևս բավարար ժամանակ կար, իսկ շահութահարկի կանխավճարի պարտավորությունը չի մարվել:

Արդյունքում Ընկերության անձնական հաշվի քարտում հաշվարկվել են տույժեր և բացի այդ անձնական հաշվի քարտում առկա այդ հարկային պարտավորությունների

հետևանքով Ընկերությունը կրել է ահռելի վնասներ, քանի որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի Ընկերությունը զրկվել է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունքից և ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կողմից առաջարկված կնքվելիք պայմանագրից:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/59 ընթացակարգի շրջանակներում 21.05.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.05.2018թ. թիվ 01/29-569 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար հայտարարված «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, որի բացման նիստը տեղի է ունեցել 25.04.2018թ., գնային առաջարկ է ներկայացրել «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և նրան առաջարկվել է կնքել 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով պայմանագիր: Սակայն, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 02.05.2018թ. ներկայացված տեղեկատվության՝ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 21 037 ՀՀ դրամի չափով պարտավորություն:

Նկատի ունենալով վերը նշվածը, հանձնաժողովը քննարկել և որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն Ընթացակարգի 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով մերժել Ընկերության հետ պայմանագրի կնքումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/59 ընթացակարգի շրջանակներում 21.05.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 25.04.2018թ. հայտ է ներկայացրել «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 2-րդ չափաբաժնի մասով կազմել է 54 000 ՀՀ դրամ, իսկ 7-րդ չափաբաժնի մասով՝ 311 040 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 02.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 21 037 ՀՀ դրամի չափով:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողոցի 04.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.05.2018թ. թիվ 03/26-3/8820-18 գրությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 04.05.2018թ. թիվ 01/29-569 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է

իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 25.04.2018թ. հայտ է ներկայացրել «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 25.04.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 02.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 21 037 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողոցի 04.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի ինչպես նաև մի շարք այլ մասնակիցների վերաբերյալ 04.06.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/9969-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե մասնակիցների մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է վերջիններիս գործողությունների և վարքագծի հետևանքով և առկա է արդյոք վերջիններիս մեղքը, թե ստեղծված իրավիճակը պայմանավորված է հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով: Եվ արդյոք նույնատիպ հանգամանքներում ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը կարելի է դիտարկել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարում (հարկային պարտավորությունների խախտում), թե ոչ:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային

պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 02.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 21 037 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսի չափը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում եմ, որ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ն «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/Շ-9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված

պատճառներով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն ածանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.05.2018թ. թիվ 03/26-3/8820-18 գրությամբ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08414357) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ